քան թէ ռուսաց գրականութիւնն ու թատրոնը, և նոյն իսկ այդ պատճառով կարդալ սկսողի ձեռքը պէտք է տալ նախ և առաջ աւելի մտաշէլի, աւելի հեշտ, աւելի հասկանալի գիրք և ոչ թէ սկսել դժուար գրքերից, որոնց իդէաները, մտքերը, գաղափարները այնքան բաղադրեալ են, որ դեռ ևս հասկանալի չեն սկսողի համար:

Զը մոռանանք որ հայերը և վրացիները թատրոնի գործի մէջ դեռ ևս սկսողներ են: Ի՞նչ միտք կայ սկսողի ձեռքը տալ Լէմի Օժիեի, կամ Մէլբանդը Դիմայի փրանսիական կեանքից վերցրած բաղադրեալ հոգեբանական գրուածները, երբ այդ բոլոր գրուածների հիմքը, ինքն եւրոպական կեանքը, որի անմիջական արդիւնք են այդ պիէսաները, ոչ թէ միայն ամենևին ծանօթ չէ մեր հասարակութեան մեծամասնութեանը, բայց և ոչինչ նմանութիւն չունի մեր կեանքի հետ:

Որեմն այդ տեսակ պիէսաների թարգմանելը, խաղալը և տեսնելը կատարելապէս ժամանակի կորուստ է, ինչպէս ժամանակի կորուստ կը լիներ եթէ դուք ստիպէիք մի մարդուն, որ դեռ միջնակարգ ուսում չէ ստացել, համալսարանի բարձրագոյն ուսման դասերը լսել: Գարգ է որ անպատրաստ լինելով, նա ոչինչ չի հասկանայ, ինչպէս մեր հասարակութիւնը ոչինչ չէ հասկանում Ֆրանսիական պիէսաներից:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԱՋԻՆ-ԲՕՂՆԻՍԻՑ

—

Նոյեմբերի 3

Խաչին-Բօղնիս գիւղը վաթսուն տուն հայ ժողովուրդ ունի, բայց նա օրինաւոր եկեղեցի չունի, իսկ ուսումնարան երբէք: Մի փայտաշէն եկեղեցի կայ, զուրկ առաստաղից, այնպէս քայքայված, որ ներս մտնող օտարականը առանց զզուանքի չէ նստում: Գնան տարի առաջ տեղացի մի այրի կին վախճանվելով ընծայել է այդ եկեղեցուն 200 բուբլի: Արժ. ծխատէր քահանան շահեցնելով այդ գումարը, հասցրել է մօտ 2500 բուբլու:

Մենք չը գիտենք թէ տէր հայրը ինչ նպատակով է շահեցրել այդ գումարը: Բայց, այնուամենայնիւ խորհուրդ կը տանք բարեկրթ հօրը, որ այդ գումարով նա մի ուսումնարան կառուցանէր գիւղումս և կարծեմ նա համաձայն կը լինի, որ ներկայում մենք մեծ յանգնք գործած կը լինենք, եթէ մեր երեխաներին թողնենք տաբարարած մեծատան, զուրկ «մայրենի լեզուի» գիտութիւնից: Իսկ եկեղեցի ունենալու նկատմամբ կարծեմ հանգստարանի տեղ, քարաշէն, կամարակապ եկեղեցին աւելի յարմար է, քան թէ այժմեան փայտաշէնը: Նոր եկեղեցի կառուցանել, յիշեալ գումարը ծախել նրա վրա միանգամայն անխորհուրդ է առ այժմ: Մեր տէր հօրը կը մնայ միայն ժողովրդին համոզել իմ ասած ճշմարտութիւնների մէջ և նա, անշուշտ, կը համաձայնվի:

Խաչին-Բօղնիսի հողը միանգամայն ձեռնտու է մշակութեան: Նա բերրի է: Հեղգիկ իրականը չունեն տրատնդներ յայտնելու այդ կողմից:

Միայն այգեգործութիւնը տրանց տալիս է տարեկան մօտ 100,000 Թուղթի գէնք. իսկ այս ձորի թաւաղներին էլ միասին 150,000, որ բոլորը արժէ տեղական գնով 90,000 բուբլի:

Տեղացիների մի եղը երկու չէ դառնում, երկու կովը՝ երեք: Փափակ անուն թուրքի գիւղն է դրա պատճառը, որ 300 անից է բաղկացած: Այս թուրքերի գրեթէ մշական գործը գողութիւնն ու աւազակութիւնն է: Նրանք ամենայաջողակ դէպքում պատրաստ են մերոնց թալանել, ձին և անասունները գողանալ...

Մեծ. Թեմական վերատեսուչ Բարխուդարեանցը գուցէ չը գիտէ էլ, որ մի գիւղ կայ այստեղ, անունը՝ Խաչին-Բօղնիս, թէ սա ուսումնարան պահելու համար 2500 բուբլի փող ունի, բայց հետեւող չունի:

Տեղացի

—

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» 1881 Թւի բուժանոցագրութիւնը արդէն բացված է: Ինդրում ենք ցանկացողներին շուտով դիմել, որպէս զի կարողանանք եկող տարին միայն մի շաբաթ ընդմիջել մեր հրատարակութիւնը:

—

Թէհեր. Պարսկաստանի մէջ ապատամբված բուրդերի շարժման մասին մինչեւ այժմ տպեցինք բաւական թւով սեփական Աղթանցութիւններ, բայց այժմ կուշխատենք ծանօթացնել մեր ընթերցողներին այդ շարժման մասին Կ. Պոլսի «Մասիս» լրագրում տպված սեղեկութիւնների հետ:

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Թումիս վերատեսի օղնական պ. Պեր Պուշնանց այժմ էջմիածնումն է գնալվում, այն ինչ Սեմիս գարդերները մնում են բաւական անհոգ գրութեան մէջ: Պ. Պուշնանցի կինը վարդապետի օրիորդաց դպրոցի մէջ վարժուհի է:»

—

Մեզ հաղորդում են, որ այս օրերս հրատարակվեցան Երեւանում հետեւեալ նոր գրքեր «Խաչիկի գնաբը» Զ. Գէորգեանի տպարանում տպված եւ «Գանտասխտ» վերնագրով, պ. Արզար Գալամիրեանցի Քարգմանութիւնը, պարոն Գալամիրեանցի սեփական տպարանում տպված:

—

ԱՒԱԼՅԱՆԻՑ մեզ գրում են, «Ռուսիայեան սաստիկ ՔանոնՔեան պատճառով ամենածանր վիճակի մէջէ գտնվում. բնակիչների մեծ մասը սկսել են իրանց ունեցած չուենեցածը ծախել հաց ճարելու համար: Աղրասները ամենայն օր Քափաւում են փողոցներում եւ անցնողներից ողորմութիւն ինդրում. Քաղաքապետիւր եւ բաղարային վարչութիւնը ժողովրդին հաց հայթայթելու վերաբերմամբ շատ սնոդ են: Քաղաքի գանձարանը անանախանձելի լրութեան մէջ է, ամեն տարի 60ա հազար բուբլու չափ դէֆիցիտ ունի»

—

ԵԱԼՏԱ քաղաքից, Կրիմից մեզ գրում են որ այդտեղ երեւացել են ՖԻԼՕԿՍԵՐԱ ասված կենդանիները, որոնք անհնազանդում են խաղողի վազերը: Այդ մասին ստացան Աղթանցութիւնը մենք կաշխատենք շուտով տպագրել

—

ԷՆԿՕՐԱՆԻՑ. Ստեփանոս քահանայ Տէր-Պետ փանոսեանից ստացանք 100 բուբլ յօգուտ Վանի սովատանջների: Ստորագրութիւնը շարունակվում է:

—

Այսօր Աբգարեանց Պատրօնում վրաց մշտական խումբը տալու է երկու նոր պիէսաներ փոխադրված ռուսերէնից. «До поры до времени» եւ „Ревнивый.“ Այսօրվանից վրաց Պատրօնում սկսվում է արսենեվեանց

ԸՐՏՍՅԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

Լրագիրների մէջ կարդում ենք հետեւեալ տեղեկութիւնները:

Գլադստոնի արտասանած ճառը Լենդընի լորդ-մերի տուած ճաշի ժամանակ կատարեալ հրաժարական է արեւելեան այն քաղաքականութիւնից, որին հետեւում էր ազատամիտ մինիստրութիւնը վերջին ժամանակները: Պահպանողական լրագիրները գովում են Գլադստոնին, որ նա հասարակական կարծիքի դէմ չը գործեց և հրաժարվեցաւ Թիւրքիայի դէմ սուիրողական

սի վրա գցած ու պատի տակ կանգնած մնում-առում է: Ամաչում եմ, թէ ասեմ «գիւղի մի տէրտէրն էլ սա է, որ այսպիսի խայտառակ ձեւով մոլորութիւն է անում:—Ընկերջս համերաթիւնը հատաւ, կամաց մտեցաւ, փիլոնը ուսից վեր առաւ ու գցեց վրէն: Տէրտէրը էլս բարկացած և կնոջ ժպիտով յետ մտիկ ասուց և հարցրեց ընկերից՝ «ով ես, ինչ մարդ ես»: Ընկերս «չինչ, հայ, քրիստոնեայ ենք», պատասխանեց և կանգնում էր քօղոն էլ վեր առնել, ես փեշից քաշեցի, ի նշանակ ունենալով տէրտէրի այրված և ամբոխից պլոկված դէմքի վրա բարկութեան նշանները:—Գարձանք դէպի տեղը: Նայեցէք այդ խանդոտութիւնները եկեղեցական անօթներին, կեղտոտ առարկաներին և ամաչեցէք, որ տարիներով չենք մաքրվել: Ընկերս ազատը հանեց, մի աւետարան պրեց և համբուրեցինք, իսկ եկեղեցու մէջ այնքան ազը և գիպլ կար, որ աւելել անկարելի էր, պէտք էր թիմենով հաւաքել և քիսցներով թափել: Այսպիսի զարմանալի բան ես երեւակայել չէի կարող, բայց աչքով տեսայ: Եթէ եկեղեցու մէջ այսպէս է, էլ ինչ խօսեմ դրսի մասին: Քեսիվէն էլ իր խոտոնդը բերել և եկեղեցու հիւսիսային պատին դէմ է արել ու դարսել:—Եթէ 150 տանից բաղկացած Բաղ-Աբարանը այսպիսի խայտառակ և վայրենի դրութեան մէջ էր, ինչպէս կը լինեն հազա միւս մանր մանր գիւղերը:

Խորին հնդհակութեան արժանի են Աչէքսանդրապոլի և Էջմիածնի գաւառապետները, որոնց կարգադրութիւնը պատպան ձիարուներ էին դրած ճանապարհներում, որ ուխտաւորներին պատպանեն աւազակների երկիղից, որոնք չատ անգամ յարձակվում են և մեծամեծ վնասներ են տալիս: Այդ, եթէ ազդուեցի առիւծասիրտ վարդանը սուրը ձեռին չանցնորդէ ուխտաւորներին և չանցկացնէ վանքասար տեղերից, առանց երկայնելու, բոլորն էլ աւազակներից մուրտներն առած կը մնային սուրը Գէորգ:

Սեպտեմբերի 26-ին մտանք Մուղնի, որտեղ ամեն կողմից այնքան ուխտաւորներ էին թափվել, որ թիւ չը կար—խառնիճաղանճ բազմութեան ազմուկներ, գուռնաչիների ճչոցներ և զրմբոմբոցը, սայլերի ճռնչիւնը, կենդանիների բառանչիւնը, մատաղացու գառների մայցը, երկոսանի նոթաթիներն զրնգրնցը... և այլ հազարաւոր ձայներ միմեանց խառնվելով մի զարմանալի տեսարան էին կազմում վանքի լայնատարած շրջականերում: Դեռ չիշում եմ ճարպիկ լարախաղացի ոգեորական ձայները, որ գուռում էր «եա գանկչի գիսան սուրբ Կարապետ» ու թռչկոտում գիպ ալեի նման: Ամեն տեղ կենդանութիւն, շարժում, ուրախութիւն էր տիրում:

Այստեղ չեմ կարող չը կրկնել իմ անկեղծ շնորհակալութիւնը մեծ. Խան-Ալեանցին, որ իր օգնականին ուղարկել էր ուխտաւորների մէջ կարգ պահպանելու: Առանց այս կարևոր կարգադրութեան ոչ միայն հնարաւոր ու մի տեսակ անհարելի խայտառակութիւններ, անկարգութիւններ, գողութիւններ կը պատահէին, այլ և մարդասպանութիւն կը լինէր:

Զը նայելով ամեն տեսակ խիստ հսկողութեանց, բայց ալէքսանդրապոլցի չարիքներների խումբը դարձեալ իրանց անամօթ լրբութիւնները գործում էին, բընտվում, բանտարկվում, թաւք ու մոր ուտում, բայց էլի չը խրատվում: Բոլոր ուխտաւորները այդ անամօթ անիծածներից զզուեցին: Ամենն էլ ազատում էին «ով սուրբ Գէորգ, դու էդ սարսափանայ գիսմեցիների գիսան, դատաստանն անես»: Ափսոս, ժամանակ չունեմ գրանց բոլոր անկարգութիւնները այստեղ յիշելու:

Գնանք սուրբ Գէորգի գերեզմանը համբուրելու: Այստեղ բազմութիւնը եռում է, ներս մտնելու հնար չը կայ: Երկու պահապան կօզակներ գրանը կանգնած, ուխտաւորին զուրս ու ներս են անում հերթով: Մերելի ընթերցող, մինչեւ ներս մտնելու հերթը մեզ կը հասնի, դու մէկ աջ ու ձախ նայիր և տես քանի քանի ազգութիւնի ձեռքերի դէպի մեզ են կառկառած և ողորմութիւն են աղերսում: Ո՛վ Տէր Աստուած, այս անդամալոյծներին, կոյրերին, համրներին, խեղճագարներին և այլ հազար ու մի տեսակ սարսափելի պատաւորներին տեսնելով, նոր եմ հասկանում, որ ես աշխարհի մէջ երջանիկ և բախտաւոր եմ:—Ա՜խ, հերթը եկաւ մեզ: Ներս մտանք, համբուրեցինք, աջամարմարը գցեցինք, մտնոր վառեցինք, դէ, այժմ մի անկիւն քաշվինք և մի քննողական հայացք գցենք դէպի գերեզմանը չոքէչոք եկող ուխտաւորների վրա:—Անհնարին գեղեցիկ կանայք են. բոլորի աչքերը պատասխանով լցված են: Հարիւր անգամ համբուրելով, գերեզմանը լիցնելով, երեսները գետին քսելով չեն կշտանում «Ով սուրբ Գէորգ, իմ ձեռս քու փէշդ եմ գցել, բարիկ ոտքով քու գուռն եմ եկել, սրտիս խորհուրդը քեզի յայտնի է, էլ ինչ ասեմ...» բարձրաձայն աղաչում էր մի ջահիլ գեղջկուհի: «Ծառդ մեռնիմ, աղայ Մուղնի, դուն մէկ դարմանիկ էնիս դարդիս...» աղօթում էր գիւղեցի պառաւը: Լսեցէք ասելի հեռաւորներիր խնդրված. «ով սուրբ Գէորգ, պասդ պահել եմ, ծոմ բռնել եմ, կարմիր մատառով գուռդ եմ եկել, մէ խնդրիք մը ունիմ. դու իմ սիրելի կայ պատիժ տաս, ես էդ անդամի ձեռից խլեմ, ես իմ հոգիս առ պրծնիմ...» Այս խնդրուածքն անող ջահիլ հարսը ամենից բարձրաձայն էր խնդրում և յատերի ուշքը գրաւում:

Վերջը, վանքապատկան սենեակները և վանքի շուրջը չատ անհարմարների գրութեան մէջ էին: Եկեղեցական գարդ ու զարդարանք ամենևին չունէր, չը նայելով, որ տարեկան նշանաւոր եկամուտ ունի: Արդեօք վնաս ունի, որ վանքի երեք տարվայ արդիւնքը իր պայծառութեան վրա գործ դրվի:

Կարգին ժամասացութիւն ամենևին չը կար: Շաբաթ օրը զօռով մի պատարագ արին, բայց այնպէս էին շտապում և ժամասացութիւնը առաջ խառնված քշում, որ խեղճ ուխտաւորները մնացել էին զարմացած, թէ «էդ ինչ տեսակ պատարագ են անում»

Մատաղները, փոխանակ շաբաթ առաւօտը մորթելու, շաբաթը ուրբաթ երեկոյին մորթեցին և իրանք իրանց կլանեցին: Այս ժամանակ ես պատահեցի քրդերի, որոնք իրանց բոլոր վերդատանով և մատաղով ուխտ էին եկել և նստելիս ջերմեռանդ էին: Մի նորածին երեխայ ունէին, տարան սուրբ Գէորգի գերեզմանի վրա և հայ քահանային խնդրեցին, որ անուն դնէ:—Ուրբաթ ձաշից յետոյ նա իմ մի քանի ծանօթների հետ տեսել գնացինք Աչապարի տեսնելու:—Ես Աչապարից շատ բան էի սպասում, ամեն բան լուսաւորված էի երեւակայում, ժողովուրդը համեմատաբար քաղաքակրթված էի կարծում, բայց ափսոս, որ ես իմ երեւակայական հաշիւներիս մէջ շատ սխալված եմ եղել:

Այդ, ես իրականը ունէի էջմիածնայ աչքերի տակ, հատատարար եպիսկոպոսների քթի տակ 500 տանից բաղկացած Աչապարկի մասին այդպէս մեծ մեծ երեւակայելու:

Մտանում եմ մի կոկ հաղնված, մօտ 30 տարեկան ջահիլ երիտասարդի և հարցնում եմ խանարարաբ. «պարոն, դուք այս գիւղից էք» Պարոնը, որի եւրոպական մաքուր հագուստից խարվելով, կրթված կարծեցի, անդուր ժպիտով պատասխանում է ինձ՝ «Այ, ձերդ գերազանցութիւն, ես այս գիւղացի չեմ, մայրաքաղաք Աչապարկցի եմ» Պարոնի այդ մէկ պատասխանից եզրակացրի, որ իմ բոլոր հարցերին պէտք է ծաղրէ, առանց բարեւելու հեռացայ և մի ուրիշ փողոց մտայ: Այնմ մի հասակաւոր աչապարկցի վաճառական, գուշի գրանը նստած: Մտանում եմ դրան. «բարեկամ, ձեր վարժատունը որ կողմն է»—«Քոր վարժատան պատերը քեզ ինչ հարկաւոր է, թէ վարժապետներին ես ման գալիս, ես չեմ ճանաչում, ծիծաղելով պատասխանեց վաճառականը և մտաւ խանութի: Երբ երկրորդ անգամ էլ ինձ չը յաջողվեցաւ կատարեալ պատասխան ստանալ, էլ երրորդը զնելու փորձ չարի. ուղղակի գիմեցի ներսը գնալու, բայց դուռը փակ էր: Եկեղեցու հարաւային կողմում կար մի շինութիւն, որի լուսամուտները բաց և ապակիները կոտրատված էին. մէջը աչկերատաց նստարաններ կային, ուրեմն սա Աչապարկի դպրոցն է: Ինչ կարող ենք ասել կողքած և ապրի մէջ կորած դպրոցի մասին: Ոչինչ, միայն թէ, ինչպէս զանազան նշանակներից երևում էր, գուցէ, յաւիտան կողքած մնայ:

Այստեղ մխիթարութիւն չը գտայ, գիմեցի մէկ եկեղեցին, սա էլ փակ էր. սրա էլ հարաւային կողմում մի երկար գանգիճ կար և նրա արեւելեան գլուխը մի սենեակ: Սա էլ դպրոց է, գուռն էլ պատուհաններն էլ բաց են, ամբողջ յատակը և պատերը ապրի մէջ կորած են: Գնա այս բաւական չէ, ուսումնական աչապարկցիք դպրոցի մէջ պատերի տակ ապականած էին: Ընկերներս այդ անների ապականութիւնը տեսնելով գնա, թեռ անելով, քթերը բռնած դուրս փախան, իսկ ես կանգնած մնացի մէջ,